

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ուչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՎԶԱՏ ՎՇՏՈՒՄ



1927



~~89/99~~  $A \frac{T_1}{6109}$  ~~5795~~

4-75 | 4-247772/9

Կաթնալուծի ձուռն

7/12/22

8/870

1703

16/11/20

1703

7/10/10

1203

Opus (- 1717-29 p. *Winnifus*  
(Yorkney)



ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ

891.99

Վ 75

# ԱՐԵՎԵԼՔԸ ՀՈՒՐ Ե ՀԻՄԱ

\*



ՀՐԱՑԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ. Մ. Խ. Մ.-ի Ժողովուրդների Հրատարակչության Հյուսիսային  
Կովկասի ճեղքային Բաժնի

1927—ՌՈՍՏՈՎ

КРАЙЛИГ № 83 – РОСТОВ-ДОН.  
Издательство „Севкавказдат“  
Заказ № 4994. Тираж 2000 экз.



ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ





ՆԱԽԵՐԳ



## 1

Պորտաւանու խաս խալու պես՝ հաղար գույնով փռվել ես դու,  
Շող ու շափրան, ալ ու նարինջ, փոսկեյերանդ, ջան Արևելք:  
Իմ արեգիւր ու արնագույն նոր գրքումը գրվել ես դու,  
Իմ յերգի շունչ, իմ հոգու հույզ, իմ կյանքի լույս, ջան Արևելք:

Սրտումդ ջերմ՝ քանի՛ լավա, քանի՛ արև, քանի՛ կրակ,  
Արևածին, արևամայր, արևաշող, ջան Արևելք:  
Հոգումդ հուր՝ քանի՛ խորհուրդ, արնոտ գրքի քանի՛ պրակ,  
Դու նոր դարու հսկան շայիւր, դու մեծ հանճար, ջան Արևելք:

Գիշերների դու վառվառ ջահ, ջան ու ջահել, ջիվան ես դու,  
Դու կարմրաբաշ արու ծնող, խոր յերկունքով, ջան Արևելք:  
Ուր վերքերի ու հեվքերի, նոր յերգերի գիվան ես դու,  
Հաղար տաղով, հաղար խաղով, շող ու շաղով, ջան Արևելք:

Յես քո վորդին—պոետը քո, բարձր ու հպարտ գոյքդ յերգեմ,  
Հրե կառքով, կարմիր վառքով, բարձրաթռիչք, ջան Արևելք:  
Յես քո տիտան ու շառաչող մեծ պայքարի թո՛վքը յերգեմ,  
Առյուծաբաշ, հաղթ ու կրքոտ, իմ գովական, ջան Արևելք:



## 2

Հէյ,  
Արեւելքի մռնչացող ալամ,  
Սալամ քեզ:

Այն հով ե,  
Վոր ինձ ձայնում ե.  
— Յերգիւր:

Այն հով ե,  
Վոր հազարհունչ ձայնով ե.—  
Ալին,  
Յզան-Յին,  
Հակոն,  
Հասան,—  
Նոր մարդը—մասսան:  
Բանվոր մասսան—ալամ:  
Նոր մարդուն—ալամին՝  
Սալամ:

Հէյ,  
Արեւելքի մռնչացող ալամ,  
Հուզեցիւ ինձ:  
Ուզեցիւ վոր յերգեմ քեզ:

Հէյ,  
Արևելքի մոնչացող ալամ,  
Պայքարիդ ծփանքը տեսել եմ,  
Յես ել եմ,  
Յես ել եմ ծափում:

Արևելք,  
Քեզ ցանցում են գույգ յերկաթադծերը.  
Ուղտապան ծերը կը մեռնի,  
Մեռնի թող:

Լոնդոնի վոսկեհորթը չգիտե՞,  
Վոր վորքան ցանցում ե քեզ,  
Սյնքան ցնցում ե քեզ,  
Վոր վաղը ցնծաս դու...

Քո շողեկանչին վաղվա,  
Քո զորականչին վաղվա,  
Քո լուսաբացին վաղվա—  
Նվեր իմ դալամը:

Հէյ,  
Արևելքի մոնչացող ալամ,  
Սալամ քեզ:





## 3

Սալամ ալեք քում, Արևելք,  
Քո նոր շայիւրից բարև՝ քեզ.  
Նորին ու նորին ու նորին  
Հրաշունչ յերգեր, արև՝ քեզ:

Ձե՛ վոր վորդիդ եմ—քո ցեղեն,  
Բոցեղեն մայր իմ Արևելք,  
Յերեկ՝ դու գերի կուռքերի,  
Այսոր՝ շառաչող Արևելք:

Վորպես ցունց, ծփանք ու ցասում—  
Ասում եմ յերգեր զարթոնքիդ.  
Ու թող աշխարհի հինգ մասում  
Գովքդ ղողանջի, Արևելք:

Սալամ վաղվա վառ որերիդ.  
Սալամ պայքարիդ հրեղեն.  
Սալամ մարտնչող նորերիդ.  
Սալամ քեզ նորին ու նորին:

Սալամ ալեք քում, Արևելք:

# Ի Մ Յ Ե Ր Գ Ը

1918—ԹԻՖԼԻՍ



## 1

Իմ յերգը ցնորք ու յերազական չի.  
Իմ յերգը նրբահյուս ու նազական չի.  
Սուլթանի դիվանին նա սազական չի:

Յերգերս հյուղերումն եմ ուսել յես.  
Հազար հուր սրտերիցն եմ հյուսել յես.  
Շանթերի շողոցովն եմ լուսել յես:

Իմ շարած բառերի մեջ մուգ արյուն կա.  
Յեւ զալիք հաղթանակ ու զարոն կա.  
Բարձրականչ, համարձակ եմ խոսում յես:

Իմ յերգում հորձանքներ ու հողմեր կան.  
Ու զարթնող աշխարհի չորս կողմեր կան.  
Մրափած մրրիկներն եմ հուզում յես:

Ջարդում եմ աշխարհը հինով լի.  
Փարչերը քնաբեր դինով լի.  
Յերգովս ձեր սրտումն եմ հոսում յես:

Ե՛յ, յերգ իմ, աշխարհը մեծ դիվանդ ե.  
Դիվանը թող լսի քեզ, վոր հիվանդ ե.  
Աշխարհի վողջությունն եմ ուզում յես:

Իմ յերգը ցնորք ու յերազական չի.  
 Իմ յերգը նրբահույս ու նազական չի.  
 Վոսկեզոծ դահլիճին նա սազական չի:

## 2

Այս գարունը գյուլխատանին լինչ:  
 Այս գարունը վարդի գովքին չի:  
 Յարն ու գինին այժմ հորանջեն թող:  
 Այս գարունը սիրո թովքին չի:

Խայամը վարդի յերգիչ է,  
 Իսկ այսոր պայքարի կանչ կա:  
 Պայքարումը վարդի յերգն լինչ է:  
 Հաֆլզի գինու յերգերը,  
 Արևելք, քեզ համար քիչ է...

Հիմի  
 Շաչ են չորս գետերդ:  
 Հիմի,  
 Ծուփ ես դու,  
 Ծփանք ես:  
 Հիմի  
 Շանթ ե բաց յեթերդ,  
 Արևելք,  
 Իմ յերկիր:

Արևելք,  
 Արնոտ յերկիր իմ,  
 Ու քանի անգամ քեզ մորթել են...  
 Այսո՛ր  
 Արար ու վարար ես.  
 Այսո՛ր  
 Հույզերդ հորդել են...

Ֆաբրիի յերգերը չկան ել:  
Հիմի հորձանք ու փորցանք ես:  
Ահա լսում եմ կռվի կանչերդ:

Կրճբումդ մրրկահունչ ղողանջ կա:  
Ղողանջդ լսող հազար ականջ կա:  
Ըմբոստ հողիների զորականչ կա,  
Արևելք,  
Իմ յերկիր:

## 3

Արևելքը  
Հուր ե  
Հիմա.  
Հին  
Ու  
Հինա  
Ձի:

Արևելքի կրճքին հիմա—  
Փորել ենք խոր պայթող մինա...

Արևելքը  
Հուր ե  
Հիմա.  
Հին  
Ու  
Հինա  
Ձի:

Եյ,  
Մուեզզին,  
Մինարայից ուր ես կանչում.  
Ձուր ես կանչում.  
—Ալլահ եբրամանար,  
Ալլահ եբրամանար:





Այժմ  
 Կանչը քո՝  
 Մեր հուր հոգին  
 Հուզողը չի.  
 Աղոթքներում սուզողը չի.  
 Հաշիշ ծխել ուզողը չի...

Արևելքը  
 Հուր ե  
 Հիմա  
 Հին  
 Ու  
 Հինա  
 Չի:

## 4

Լսիր,  
 Իմ ընկեր,  
 Հորանջող ու դանդաղ քայլերով  
 Մի քայլիր,  
 Մի քայլիր:

Աշխարհում  
 Ուղտերի կարավան ել չկա:  
 Աշխարհը հիմի  
 Վաղք ե,  
 Վաղք ե:  
 Իսկ դու,  
 Իմ ընկեր,  
 Հորանջող ու դանդաղ քայլերով  
 Մի քայլիր,  
 Մի քայլիր:

Հիմի  
 Անապատներումն ել Շարքի  
 Ուղտերի յերազուն կարավան  
 ել չկա:  
 Հիմի  
 Բոմակյի բազարում յեռուն՝  
 Ֆեյլադի իշուն գին տվող  
 ել չկա:  
 Նա հնացել է,  
 Մնացել է,  
 Անցել է...

Արդեն  
 Խոււ էն,  
 Խարխոււ էն  
 Ճախարակները փայտաշեն:  
 Լքված դադգյանը—  
 Բեռնակրի պես ծերուկ՝  
 Սգում է իր որն անճար:

Լսում ես ճիչը,—  
 Շողեկարավանն է թռչում:  
 Հիմի նրա յերգն է հնչում:  
 Աշխարհը նրա նման  
 Վազք է,  
 Վազք է:

Հզոր յերկաթն է զըրնգում  
 Մեր փողոցում,  
 Ձեր փողոցում,  
 Աշխարհ—փողոցումը մեկ:  
 Հնչում է յերկաթը հոգի առած,  
 Թռիչք է ու շառաչ:

Մրոտ բազուկներն են,  
 Վոր հրում են նրան  
 Առանց,  
 Առանց,  
 Առանց...

Լսի՛ր,  
 Ի՛մ ընկեր,  
 Իսկ դո՛ւ  
 Հորանջաղ ու դանդաղ քայլերով  
 Մի քայլի՛ր,  
 Մի քայլի՛ր:

## 5

Քթախոտ վաճառող դուքանչի Զաֆարը  
 Ասի թող.  
 — Աշխարհը քթիս տակն է միայն:

Իսկ դո՛ւ,  
 Ի՛մ ընկեր,  
 Լսի՛ր,  
 Աշխարհը մեծ է,  
 Մեծ է  
 Ու մեկ,  
 Շար շար ողակների շաղկապված  
 Մի շղթա:  
 Ու նա  
 Մի նոր և լուսե հեքյաթ ունի,  
 Վորը հյուսել են  
 Ու լուսել են  
 Զարքաշ,  
 Մրոտ  
 Յեվ յերկաթին շունչ տվող մարդիկ...

Ասում ես.

— Ո՛ւր, ո՛ւր են նրանք:

Նայիր յերկնքի՛ն,

Սահմանն ի՞նչ,

Նա մեծ ե,

Մեկ ու լալն:

Այնտեղ

Աստղերն են շողում

Շարք-շարք,

Խումբ-խումբ,

Հանուր:

Ասում ես.

— Ո՛ւր, ո՛ւր են նրանք:

Ամենուր են:

Ճիշտ այդպես,

Ճիշտ այդպես,

Աշխարհի վրա փռված

Բյուր են,

Հո՛ւր են,

Ամենուր են:

Ձեզն ի՞նչ,

Սպիտակ,

Սև

Կամ դեղինն ի՞նչ,

Ամենուր են:

## 6

Սազանդար,  
 Սազանդար,  
 Ե՛ր,  
 Ձայնը  
 Զընգչընգան հունգուրիդ  
 Կանչ հունի,  
 Զափ հունի՛,  
 Զի՛ լավում,  
 Թո՛ւյլ ե:  
 Կլուեն յերգերը հունգուրիդ լացկան:  
 Զի՛ հուզի,  
 Ել՛ չի՛ հուզի  
 Զունգուրիդ ճիչը մեզ:  
 Սիրտը տխտան տիյեզերքի  
 Զի՛ ուզի,  
 Ել՛ չի՛ ուզի  
 Հին յերգդ հեզ...

Հողաշխարհում  
 Հիմի  
 Հանուր,  
 Ամուր,  
 Մեկանց  
 Շեփորում են շեփորները պղնձաշեն,  
 Շեփորում են  
 Խորականչ,  
 Նորականչ:  
 Ռազմաշեփոր են շեփորում  
 Հզորականչ,  
 Զորականչ...

Միլիոն բրոնզե բուռնցքները  
 Քսան փափուկ ձեռների դեմ  
 Զորականչ...

Հիմի  
 Յերկիրը յերկնում ե.  
 Հուզանք  
 Ու զանդ,  
 Յերկունք ե մեծ,—  
 Վոր գալարվի,  
 Վոր գալարվի,  
 Այսուր ու վաղը գալարվի,  
 Վոր բարձր ճչան,  
 Հեփան,  
 Ծնի  
 Պողպատակուռ անիվների,  
 Ելեքտրավառ հանճարների,  
 Բրոնզակուռ ղեկավարը...

## 7

Ահա,  
 Աշխարհը վաղք ե,  
 Վաղք ե.  
 Յեվ յես հսկա վաղքերի,  
 Հանդուգն խոյանքների յերգն եմ կանչում,  
 Յերգս մրրկականչ ե...

Լսում ես,  
 Ընկեր իմ,  
 Ծանոթ,  
 Անծանոթ,  
 Մեկ ու սպիտակ կամ դեղին,  
 Ուր ես  
 Ուր ես,  
 Ուր վոր կաս,  
 Ուր վոր ես,



Ով վոր ես,  
Լսիր,  
Հորանջող ու դանդաղ քայլերով  
Մի քայլեր,  
Մի քայլեր...



ՍՏԱՄԲՈՒԼ

ԲՈՄՊԵՅ

ՀԱՐԵՄԻՑ ԴՈՒՐՍ



## ՍՏԱՄԲՈՒԼ

Ստամբուլը մի փաշա յեր յերեկ,  
 Անունը—Ոսման կամ Ալի:  
 Յերկու ծովերի արանքում  
 Փռել և նաշխուն մի խալի:  
 Յեվ ծալապատիկ, ծուլլ նստած—  
 Գաշում եր համբիշը մարջանի:  
 Ծխում եր նարգիլեն թամբաքով,  
 Շոյում եր մորուքը յերջանիկ:  
 Խմում եր կում-կում ու հանգով  
 Խահվե՝ ֆարֆուրե ֆինջանից:

Ստամբուլը մի խալիֆ եր խոփոս—  
 Մահմեդի ցեղիցը սերված,  
 Կախված ցից բեղիցն ալլահի:  
 Ուզեր՝ կղատեր գյավուրին.  
 Ուզեր՝ կհանձներ ղասաբին.  
 Ուզեր՝ կթամբեր ջորու պես,  
 Վոր մեջքիդ նստած ծանրախոհ՝  
 Ալլահին նամազ ուղարկեր:

Ստամբուլը յերեկ «Նանը՛մ» եր,—  
 Հանը՛մ եր սիրում, սեվաշյա՛  
 Կանգնած աշխարհի մեյդանում:  
 Շատերին իր տունն եր տանում,  
 Բանում եր կուրծքն իր ճերմակ,  
 Կամ վերմակը մահճի կակուղ...

Շատերին ֆալ եր բաց անում,  
 Յանում ե բաղդ, ժպիտ ու հարբանք.  
 Ծախում ե աճուրդով եժան  
 Թալիսման, համբույր ու տարփանք...

Ստամբուլը մի բարձ եր բռնաբռուլ:  
 Նիրվանա: Հաշիշ: Որորանք:  
 Մահով-մահիկով մինարա:  
 Համամ եր թամամ ու շամամ:  
 Շարբաթ եր: Շամպայն ու շանտան:  
 Բանկիրը վո՞ր տեղի ու ցեղի  
 Զգիտեր շանտանի այն ճամբան:  
 Բանկիրը վո՞ր տեղի կամ ցեղի  
 Զի հարբել այն շքեղ շանտանում:  
 Վո՞ր լորդը թեանցուկ չեր տանում  
 Ստամբուլ հանրմին տաք բաղնիք...

Յերեկ եր:  
 Սթամբուլը—հնում:  
 Քնում եր:  
 Մնում եր խոր քնած...  
 Այդ հինը հնումն ե,  
 Քնումն ե:  
 Յերեկ եր,  
 Վոր չկա,  
 Վոր գնաց...

## Բ Ո Մ Պ Ե Յ

Ե՛յ,  
 Բո՛մպեյ,  
 Բո՛մբ ես դու:

Հին Հինդի սրտում՝  
 Դո՛ւմ—դո՛ւմ—դո՛ւմ  
 Բո՛մբ ես դու,  
 Ե՛յ,  
 Բո՛մպեյ:

Թե թափով թնդաս դու—  
 Լափող բոցերիդ դիմացողն ո՛վ:

Թե թնդաս դու թափով—  
 Դավերն ու ավերը,  
 Ցավերը դառն  
 Կդառնան թո՛ղ.  
 Ե՛յ,  
 Բո՛մպեյ:

Արդեն,  
 Արդեն,  
 Արդեն,  
 Վառվում են պատրույգներդ բոմբի...



Կրակ են առել  
 Վառվել են  
 Պատրույգներդ բոմբի...

Պատրույգիդ կրակ տվողը՝ շատ...—

Ծովափիդ շաբա շաբված  
 Շողեթոք նավերիդ մատրոսները.  
 Շողեվազ քարվանիդ մեքենավարը.  
 Ծխահոսներիդ ծուխ տվող բանվորը,  
 Վճրն ասեմ,  
 Վճրը,  
 Ե՛յ,  
 Բոմպեյ:

Լորդն ու սահիբը—  
 Տերերդ ոձ,  
 Վորոնք խոց են տվել քեզ,  
 Պիտի սողան,  
 Դողան պիտի  
 Կրոնկի տակը 300,000,000-ի:

300,000,000-ի սրտում  
 Դո՛ւմ—դո՛ւմ—դո՛ւմ  
 Պիտի թնդաս դու.  
 Պիտի թնդաս,  
 Վորոտաս  
 Ու տաս  
 Հին Հինդին  
 Արև,  
 Ե՛յ,  
 Դու բոմբ,  
 Բոմպեյ:

Կը լինի,  
Կը լինի այդպես,  
Վես Բնմայեյ:

Գալիք ումազոռ ողերիդ համար,  
Գալիք ամրակուռ նորերիդ համար,  
300,000,000-ի տոնի համար  
Ռմբաձիգ յերգ եմ պահել,  
Ն՛յ,

Դու բոմբ,

Բնմայեյ,

✓ Լինինի յերկրից կարմիր սալամ քեզ:



## ՀԱՐԵՄԻՑ ԴՈՒՐՍ

Հարեմից դուրս փախչող հարձի պես դեռահաս՝  
 Կարոտ վառ կյանքին ու սերին,—  
 Ամպերի արանքից լուսինը դուրս սողաց,  
 Մազերը ցանցիւր ուսերին:

Համարձակ քայլում ե կապուտակ յերկնքից՝  
 Դեպի հեռուներն արևի.  
 Ու ճամբին աստղերը՝ ջահելներ շրջմուխ՝  
 Շարքով կանգնել են բարևի:


Ո՛ր, վորքա՛ն ե տանջվել ամպահույս քողի տակ,  
 Տանջվել հարեմի յեսիրում.  
 Ատո՛ւմ ե փաղաքշանքն ստրուկի, իշխողի.  
 Միայն արևին ե սիրում:

Սիրում ե նա միայն արևին աշխատող՝  
 Ինչպես մի բանվոր տիտանի.  
 Սիրում ե նա միայն արևի սերը հուր,  
 Սերը աշխարհին պիտանի...

Քողազերծ ու հպարտ, հարեմից դուրս փախած,  
 Կարոտ արևին ու սերին.  
 Կապուտակ յերկնքից լուսինը քայլում ե,  
 Մազերը ցանցիւր ուսերին:

# ԼԱՍՏԱՆԱՎՈՐԴՆԵՐ

1919—ԹԻՖԼԻՍ



Իմ Լաստ,  
Դողալով մի գնա,  
Շողալով,  
Լողալով գնա:  
Մի դողա:  
Դողալը  
Լքվածների և թույլերի համար ե:  
Յես ու դու  
Միասին  
Մեր ճակատագիրն ենք դարձնում:  
Ո՛վ կասի մեզ,  
Վոր յես ու դու հիմարներ ենք:

Հեյ, հեյ,  
Լաստս ձգել եմ ջրերի վրա  
Ու ինձ տանում ե:  
Բախտս  
Անհայտ ճակատագրին չեմ հանձնի:

Բռնել եմ ձեռներումս ամուր  
Թիյերը գույգ:  
Ու վարում եմ առաջ  
Իմ լաստն ու բախտը,—  
Իմ ճակատագիրը:

Լաստս  
Հորդ գետերի վրա՝  
Ինձ տանում ե հեռձև:



Լաստո տանում ե ինձ  
Դեպի ովկյանն անծայր,  
Ուր թափվում են  
Աշխարհի գետերը բոլոր,  
Աշխարհի քրտինքը բոլոր...

Հիմի,  
Այս ժամին,  
Գիտեմ,  
Բոլոր գետերի վրա,  
Վոր փռվել են աշխարհում, ---  
Շողում,  
Լողում են  
Լաստանավեր հազար հազար...  
Լողում են առաջ  
Լողվորներ միլիոն ու կրկին միլիոն...

Նրանք,  
Վոր ուժ ունեն  
Բազուկներումս իրենց  
Յեվ հողիներում՝ քեն.  
Նրանք,  
Վոր գիտեն շարժել թիյերն իրենց  
Ճարպիկ ու քաջ,—  
Հիմի,  
Այս ժամին,  
Բոլորը, բոլորը,  
Ամենուր  
Շողում են առաջ,  
Լողում են առաջ,  
Դեպի  
Քրտնողներ  
Անծայրածիր  
Ու մրրկվող ովկյանը...

Վերջ չկա,  
Ծայր չկա  
Ու համբանք՝  
Շարժվող լողվորների,  
Լաստանավերի:

Յեվ ամեն մի լաստանավ  
Բեռնած հակերով ցատում,  
Ամբարած լախտահար բռունցք,—  
Շողմում ե,  
Լողում,  
Վր համնի մի սր  
Հակա ովկիանին...

Յեվ այն ժամանակ  
Վա՛յ ջրչուններին,  
Ջրագայլերին,  
Վորոնց կզակները կզգան  
Հարվածները շառաչող թիերի...

Հէ՛յ, հէ՛յ,  
Լաստս ջրերի վրա յեւ ձգել:

Ու ճամբան գիտեմ յես,  
Այնպես,  
Ինչպես գիտե  
Բանակի հրամանատարը  
Ռազմագծերը թշնամու:

Յեվ  
Մթին գիշերում  
Լսում եմ, լսում եմ  
Հեռավոր գետերի վրա շողացող,

Լողացող  
Իմ յեղբայրների,  
Իմ սրտակիցների,  
Իմ ընկերների  
Շաչող թիերի դարկը  
Պղտոր ջրերի կրճախ,—  
Իմ ընկերների,  
Վարոնք  
Գալիս են, գալիս են, գալիս  
Ձուլվելու հուզված սրտին  
Մեծ ովկյանի...



# Ծ Ո Վ Ը

1922—ՅԵՐԵՎԱՆ



Աֆրոնով մի թմրիր—թե տանջվում ես,  
Հաշիշով մի քնիր, յեղբայր իմ...

Ասում ես—  
Պղտճր ե կյանքի ծովը:

Լինի՛ թող:

Իսկ դու  
Պառկել ես ծովափին:

Ծովափի յերգիցը քո շահն ի՞նչ...  
Այազի վրա ծովափնյա  
Անշունչ դիակներ փռվեն թող...

Տես,  
Անծիր ծովը  
Հորձանք  
Ու փորձանք ե:

Ասում ես—  
Մահն ե քրքշում հորձանքում:

Լինի՛ թող:

Պայքարի բերկրանքին ծանոթ ես,  
Յերբ կուրծքդ ուռչում ե,



Թռչում ե...

Յերբ բազում զույգ

Ճեղքում ե վայրագ ակիբը...

Լսվ ե, ո՛ր, լսվ ե մեռնես հորձանքում,

Բան թե ծովափին ձգված

Ծանր ու ծուլ անընդհատ...

Աֆիսնով մի՛ թմրիր—թե տանջվում ես:

Հաշիշով մի՛ քնիր, յեղբայր իմ...

Ծածուկ ծմակից ու ծերակից,

Ծանոթ անծանոթ ձորերից—

Վտակներ վարար,

Առուններ հոսուն,

Գետեր փրփրաբաշ,

Ջրվեժներ շաշո՞ղ՝

Մեկ մեկ ու մեկ մեկ

Գալիս են, գալիս

Հսկա աշխարհի լայն բացաստանում,

Իրար են ձուլվում ծափ ու ծփանքով

Ու շառաչում են հուժկու,

Միասին...

Թեվիցդ բռնեմ,

Վեր կաց,

Դեպի ծով:

Անդու-Պարսկական Նավթընկերության

Փայտե՞րն ես դու,

Գուցե

Հեջադի խալիֆ Հյուսեյնի վորդե՞ն ես անհոգ.

Միթե Բաղդադի Շարիֆի վոսկին

Բոլորը քո՞նն ե...

Շարիֆի բեռնատար ուղտերի քարվանը  
Զղվում ե  
Բաղդադից  
Կասր Շիրին,  
Քիրմանշահից  
Մինչև Թեհրան,  
Բասրայից  
Մինչ Բեյրութ:  
Զսկ դո՞ւ...  
Վե՛ր կաց,  
Յեղբայր իմ,  
Յեռեղ մի նայիր...  
Ի՞նչ ես տատանվում,  
Ափսոսանքի ի՞նչ ունես,  
Վոչի՞նչ,  
Վոչի՞նչ,  
Ուրեմն  
Դեպ ծովը ծփուն...

Հաշիշ չլինի թող հոգիդ,  
Վտնացող հովաղ լինի թող՝  
Սուր սուր  
Ու հոշտոդ ժանիքներով:  
Սիրտդ աֆիոնով որորվողը չի՛,  
Վորոտացող ամպրոպ լինի թող՝  
Վառ վառ  
Ու հրկիզող շանթերով...

Քեզ խարաղանել են կռատաբար...  
Վոսներիդ վրա շղթաների վերքերը  
Խորն են դեռ...  
Դու զույգ մի բազուկ ունես  
Յեվ ուրիշ վոչի՞նչ,  
Վոչի՞նչ...

Ուրեմն,  
Իմ յեղբայրն ես դու,  
Յես—ընկերը քո...

Վեր,  
Թեկցդ բռնեմ,  
Դեպի ծովը ծփուն...

Աֆիոնով մի թմրիր—թե տանջվում ես.  
Հաշիշով մի քնիր, յեղբայր իմ...



# Դ Ր Ա Խ Տ

1922--ՅԵՐԵՎԱՆ



Ուրբաթ որը,  
Ուրիշ ֆաթիհի մզկիթում,  
Ծերուկ իմամը  
Մարգարեյի գիրքն է կարդում:

Հավատացյալները  
Լսում են նրան անշշուկ,  
Ու ջերմեռանդ շարժում են  
Իրենց գլուխները ծանրաբեռ:

Իմամը կարիք չունի  
Թերահավատ ունիլընդիրներին,  
Իմամը կարիք չունի  
Իմաստուն մարդկանց:  
Ո՞վ է այն հիմարը,  
Վոր ասի նրան.  
— Ուղիղ չես կարդում..  
Կամ  
— Սուտ է, սուտ է...

Իմամը առատաձեռն է,  
Ամենքին տեղ է տալիս  
Հանդերձյալ աշխարհի  
Յերանավետ գրախտում. —  
Ուր  
Հուրիներն ու փերիները պես-պես,



Սպիտակ,  
 Պարսպաշ  
 Կամ սևաչվի—  
 Շոյեն պիտի քնքշորեն  
 Զրկիր ֆեյզուլահի մորուքը:  
 Կամ  
 Իմ հարեան սոված Ոմարի կմախքացած մարմինն  
 Պիտի փարվի  
 Զաննաթի աղջիկների սիրուններից սիրունը կրքոտ:

Դրախտումը—  
 Որոր,  
 Վայելք,  
 Հեշտանք  
 Ու հրաշք կա,—  
 Հազար ու մեկ գիշերների  
 Հեքյաթը դյուլթական,  
 Հարբանք,  
 Տարփանք,  
 Ու սեր,  
 Սեր  
 Կնոջ մարմնի պես տաքո՜ւկ:

Այնտեղ  
 Անուշավետ բույրերը գգվեն պիտի  
 Ախուռապան խեղճ ֆեյլահի քիթը...

Այնտեղ  
 Մետաքս շապիկը վոսկեծոպ  
 Ծածկի պիտի  
 Մուրացկան Ռահիմի մարմինը մերկ...

Լսում են  
 Հավատացյալները

խոստումը մարգարեյի,  
Վոր հնչում է  
Ծերուկ իմամի բերնով:  
Նրանք,  
Վոր կյանքում ջերմություն չեն տեսել,  
Նրանք,  
Վոր ցնցոտիներ ունեն իրենց հագին,—  
Ինչպես աֆիոնով հարբած՝  
Ընկնում են  
Յերազանքի գիրկը հեշտորոք,  
Ասես  
Հենց տեղն ու տեղ  
Ջաննաթի այգուլմն են նստած:

Հանկարծ,  
Հանկարծ  
Մզկիթում  
Մի խրոխտ ձայն է հնչում:

Մի մալդ աղոթողներից՝  
Կանչում է.  
— Լսեք, լսեք, եյ,  
Իմամի բերանովը  
Ճշմարտությունն է խոսում:

Այնպես  
Ինչպես նա յե պատմում  
Դրախտի մասին,  
Վոր դուք տեսնելու յեք  
Հանդերձյալ կյանքում,  
Ճիշտ այնպես մի դրախտ  
Տեսել եմ յես  
Աշխարհի վրա:

Այստեղ,  
 Մեր քաղաքում,—  
 Ուր  
 Մուրացկանների,  
 Արտավոզների,  
 Աշխատողների  
 Ու զրկվածների թիվը—  
 Անթիվ է.  
 Այստեղ,  
 Մեր քաղաքում,  
 Եւ Մաշհուր փողոցի վրա  
 Բարձրանում է պալատը մարմարակերտ  
 Պալիֆ Ֆաթիհի:

Ճիշտ այնպես,  
 Ինչպես իմամն է պատմում  
 Անծանոթ դրախտի մասին,  
 Պալիֆ Ֆաթիհի պալատն է մեր քաղաքում:

Յեւ յես,  
 Վոր վարձու պահապանն եմ այն պալատի—  
 Մի ստորուկ ծառա,  
 Այ,  
 Այս զույգ աչքովս տեսել եմ  
 Հազար անգամ—  
 Թե ինչպես  
 Գեղամարմին հուրի-փերիններ՝  
 Վոսկեզոծ դանլիճումը պալատի,  
 Ցատկելով ծնկներին խալիֆի  
 Գալարվում են  
 Ճկուն,  
 Ջերմ,  
 Ոճադալար  
 Մարմիններով.  
 Ու փաղաքում,

Շոյնւմ,  
Շոյնւմ են  
Նրա սպիտակ,  
Յից-ցից  
Ու ցանցաւ մորուքը:

Յես դեռ քսանհինգ տարեկան եմ—  
Վարձու պահպանն այն պալատի:  
Յես շոյվել եմ շատ  
Հարվածներովը տիրոջս մտրակի,  
Բայց  
Փերիներից և վոչ մեկը  
Ձշոյեց մորուքիս մի թելն անգամ...

Իմանմ,  
Իմ հոգին  
Ձի՛ գնա դրախտը հեռավոր...

Իմանմ,  
Այս լայն աշխարհի վրա  
Դրախտներ չա՛տ կան...

Իմանմ  
Թող մտրակը  
Ձշոյի իմ վոսկորները...

Իմանմ,  
Թող վաստակած հացս  
Անարցունք լինի...

Իմանմ,  
Իմ հոգին  
Ձի՛ գնա դրախտը հեռավոր...  
Այս յերկրում  
Դրախտներ կան այնքա՛ն չքեղ.

Վորի դռները  
Դեռ փակ են շատերի համար...

Այս յերկրի դրախտին եմ կարոտում յես:  
Իմամ,  
Իմ հոգին չի գնա դրախտը հեռավոր...



# Դ Ե Ր Վ Ի Ծ Ը

1921—ԹԵՀՐԱՆ





Հեռո՛ւ հեռո՛ւ հեռուներից մի դարվի՛շ յեկավ։

Նրա կոշիկները վրա նստել ե դեռ  
Հեջադի արևատապ ավազների փոշին։

Իջել ե նա մեծ սրճատունը քաղաքի,—  
Մեծ սրճատունն արաբական,  
Վոր բացվում ե  
Նեղ ու անշուք մի փողոցի վրա։

Շուրջն են հավաքվել  
Բոլոր վոսկրացած,  
Սոված,  
Քրանող  
Ցեվ անթեվան բազմությունները։  
Ու նա պատմում ե  
Լեյլու և Մեջնունի սիրո մասին,—  
Թե ինչպես նրանք սիրեցին,  
Սիրեցին իրար  
Ու մեռան...

Հեյ,  
Բարձա դարվի՛շ,  
Մեզ ի՛նչ Լեյլու և Մեջնունի համբույրը։  
Մեզ ի՛նչ վարդի ու լոտոսի բույրը։  
Մեզ ի՛նչ հուրի՛նների ու փերի՛նների հրապույրը։

Անցել ես դու շա՛տ ու շա՛տ յերկրներ,  
 Շրջել ես Գանգեսի ափերը ձիգ:  
 Իրաքի հարթավայրն արևոտ:  
 Տեսել ես գրկախառնումը Տիգրիսի ու Յեփրատի:

Հեյ,  
 Բաբա դարվիշ,  
 Դու մեզ ուրիշ խոսք ասա:

Պատմիր մեզ Գանգեսի հառաչի ու շառաչի մասին,  
 Տիգրիսի ու Յեփրատի արյունոտ որերի մասին,  
 Արևելքի անարև մարդկանց մասին,  
 Հեռավոր աշխարհների փոթորկվող սրտերի մասին...

Հեյ,  
 Բաբա դարվիշ,  
 Դու մեզ ուրիշ խոսք ասա:

Նեղոսը, Տիգրիսն ու Գանգեսը բաղդընկերներ են:—  
 Յերեքն ել ցասում ունեն ու ճիչ...

Հեյ,  
 Բաբա դարվիշ,  
 Դու մեզ պատմիր այն տեղերի մասին,  
 Ուր վորքան, վորքան շղթայվածներ կան  
 Կյանքի ու մահվան մեջ դալարվող...

Հիմի,  
 Լեյլու և Մեջնունի յերկրումն իսկ,  
 Ուր սերը եժան ե այնքան,  
 Վոր կաշուս մ մարդկանց վոտներին,—  
 Ո՛վ սիրտ ունի սեր ու տարփանք տենչալու...  
 Բոմպեյի ծովափներում,  
 Մանիդայի ու Փենջապի բացուտներում—  
 Հիմի  
 Զարբաշ, գրաստված ու մոլեգնող մարդկանց սրտերում՝

Սէրն ե բացել իր շուշանները,  
Թէ վրեժի,  
Յասման  
Ու ազատութեան վորոտացող ամպրոպ կա...

Իսկ այստեղ, —  
Մեր յերկրում,  
Ուր յերբեմն դահիճ փարավորներն են իշխել,  
(Հիմի ել դեռ կան, դեռ կան)  
Սերը սիրող իմաստակ չես գտնի  
Խրճիթներում կծկվող մանդկանց մեջ...

Հէյ,  
Բարս գարվիշ,  
Դու մեզ ուրիշ խոսք ասա:

Սեր չլինի թող քո խոսքը,  
Խինդ չլինի թող.  
Քուն չլինի թող քո խոսքը  
Յեւ վոչ ել հաշիշ:  
Դու մեզ ուրիշ խոսք ասա:  
Կրակ ու հրեղեն խոսք ասա:

Յեւ տես թե ինչպես  
Հազար ու հազար մարդիկ  
Կատաղի խրխինջ կարճակեն —  
Ինչպես ագնիվ նժույգը արար բեղվինի,  
Վոր պատրաստվում ե արշավի:

Յեւ յերբ դառնաս դու կրկին  
Դեպի Հեջագ ու Փենջաբը  
Ու քայես դարձյալ յերկրից յերկիր,  
Հեռու ու հեռու տեղեր —  
Շուրջդ հավաքիր մուրի և մրուրի մարդկանց  
Ու յերգիր նրանց  
Խրխնջացող ու հրաթուխք նժույգների յերգը, —

Ըմբոստ նժույզներ,  
Վորոնք այսօր կամ վաղ լուսաբացին  
Արշավեն պիտի Վիշապների Դեղին Արքայի դեմ...

Աստ  
Վոր Լեյլու և Մեջնունի սիրո հեքյաթը  
Հնացել է...

Պատմիր նրանց  
Խրխնջացող նժույզների մասին,—  
Վորոնք  
Իրենց պողպատյա սմբակներովն արդեն  
Արագ,  
Ամուր  
Հանուր աշխարհի գետինն են տոփում...



Յ Ե Ր Կ ՈՒ Ս Ե Ր

1921—ԹԵԼՐԱՆ





## 1

Զեմիլե,  
Մեռաքս ու շղարշ շորերով  
Կշորորասս դու:  
Գունատ ու մերկ մարդիկ գործեցին  
Մեռաքան ու շղարշը քո:

Անսեր աղջիկներ  
Գիշեր ու ցերեկ,  
Ցերեկ ու գիշեր  
Նստած անքուն,—  
Կարեցին,  
Կարեցին,  
Կարեցին,  
Կարեցին  
Իրենց մասներովը մոմե...

Վզիդ մարգարտե շար ես կապել:  
Մարգարիտներդը  
Հատիկ, հատիկ,  
Վորեբրի այտերից վար թափվող  
Արցունքների պես—  
Հատիկ, հատիկ...

Զարդարել ես  
Բազուկներդ անաշխատ

Ապարանջաններով վոսկեղեն,—  
Ո՞ւմ քրտինքն է այն,  
Ջեմիլե:

Զի՞ ճշում նրբանազ մեջքը քո,  
Զի՞ սեղմում մեջքդ ավաստե գոտին,—  
Իր վորդուն թաղող  
Մոր բազումների նման...

Մեր քաղաքի  
Սիրո՛ւնն էս դու—ասում են:  
Ջեմիլե:  
Մեր քաղաքի  
Գարո՛ւնն էս դու—ասում են:

Սիրունը  
Սուլթանի՛ն միայն պիտի,—ո՛վ ասաց:  
Գարունը  
Վոսկո՛վ են դնում միայն,—ո՛վ ասաց:

Ջամիլե,  
Վանդակումն է փակել քեզ  
Քո տերը:  
Վոսկով է դնել քեզանից  
Քո սերը:

Դուրսը  
Ազատ տշխարհ կա,  
Գիտե՞ս դու...

Գոհնե  
Մի որ  
Արևի շողը տեսել էս,  
Նոր կյանքի ծփանքը լսել էս...

Ջեմիլե,  
Վանդակումն ե փակել քեզ  
Քո տերը...

Ջահեղները մեր քաղաքի  
Յերդվում են  
Վոր դու փերին ես փերինների—  
Ջաննաթից փախած:  
Մեր քաղաքի Ջահեղներն ազնվացեղ  
Պալատիդ դռան առաջ թափառում են  
Վորսկան շների պես—  
Քեզ համար:

Դու  
Ծերուկ սուլթանին  
Համբույր տուր,  
Փոխարեն արմատ ու հակինթ առ...  
Յեվ հետո  
Թառամիր,  
Ինչպես նարգիզն ե թառամում  
Զուրկ շողերիցը շեմսի...

Ջահեղները մեզի մեր քաղաքի՝  
Վորսկան շների պես  
Հոտոտան թող,  
Ջեմիլե,  
Փողիները պալատիդ դռան:  
Թող հոտոտան  
Այսոր,  
Վաղ  
Ու հետո՝  
Կզնան նրանք  
Նեղ փողոցի այն յերկհարկանի տունը,

Ուր դեր  
 Ու փափկամիտ աղջիկներ  
 Զնչին արժեքով  
 Յնորք  
 Ու սեր են բաժանում...

Զեմիլե,  
 Ձե՞ վոր դու ել  
 Վսկոյվ ես գգվում սուլթանին...

## 2

Մի աղջիկ կա:

Մի աղջիկ կա,  
 Վոր սրտում մաղձ ունի,  
 Իսկ աչքումը—  
 Շեմս արև:

Գահիրեյից Ալեքսանդրիա տանող  
 Ճանապարհի վրա՝  
 Քարեր ե ջարդում  
 Յերկաթուղագծի համար:

Արևի տակ  
 Քրտինքը  
 Նրա ճակատի վրա ցուլքեր ե տալիս  
 Շափյուղաների նման:

Քարեր ե ջարդում ու քրքջում ե  
 Բանվոր քարտաշների հետ:

Նրա կուրծքը վողորկ է,  
 Խնչպես տափաստանն Իրաքի:  
 Յեվ յերկու գետեր կենսատու—  
 Յեփրատ ու Տիգրիս՝  
 Հորդում են  
 Ու ալեկոծվում այնտեղ...

Արևի աղջիկ է նա,  
 Զրկանքը  
 Իրոնդել է նրան.  
 Յեվ նոր աշխարհի մայրությունը  
 Յեռում է հոգումը նրա...

Հանապարհի վրա,  
 Ամեն որ,  
 Մարդկային իմաստուն կրքով  
 Իրար ենք նայում անամաչ...

Որը մթնում է:  
 Լուռ է  
 Վարիչի մտրակի շաչը:  
 Վերջանում է աշխատանքը որվա:

Ու մենք—  
 Յես ու նա,  
 Ասում ենք իրար հուզված.

— Յեկ,  
 Աչքիս լույս,  
 Գնանք ինձ մոտ,  
 Թրջենք հացը ջրով,  
 Ընթրենք:



Յեվ հետո  
Սիրենք իրար ազատ,  
Արևի պես,  
Հարեմից հեռու,  
Սիրենք իրար ազմկոտ կյանքում՝  
Մարդկային իմաստուն սիրով...



# ՈՒՂՏ

Նովեր Իրաքի արաբ աշխատավորության

1921—ԲԱԳԴԱԾ



Յերեկ,  
 Անապատումը մեր անսահաման,  
 Իմ ուղտ,  
 Իմ սիրելի,  
 Պարանոցդ վեր պարզած,  
 Ուզում եյիր շեմս—արևը համբուրել...

Յերեկ,  
 Ովադիսումն Ել Սամի,  
 Իմ սրտակից,  
 Իմ մտերիմ,  
 Յես ու դու  
 Գիշերները  
 Յերկնքի փերուզատառ գիրքն եյինք կարդում:

Հիշում ես,  
 Ձե՛ր,  
 Վոր յես  
 Համբուրում եյի քեզ,  
 Աչքերը քո,  
 Իմ ընկեր,  
 Իմ սիրելի:

Իմ աշխատանքի  
 Ու ճամբաների ընկեր,  
 Հիշում ես,  
 Ձե՛ր,

Վոր քրտինք եյինք թափում յես ու դու,  
Ինձ ու քեզ  
Յեվ ամենքի համար...

Այսոր,  
Պարանոցդ վեր չես բռնում,  
Ինչո՞ւ:

Այսոր,  
Յերթդ՝ մտամոլոր,  
Քայլերդ՝ դանդաղ,  
Ինչո՞ւ:

Այսոր,  
Իմ սիրելի,  
Կարոտ չե՞ս շեմս—արևին,  
Ինչո՞ւ:

Այսոր,  
Ո՞վ քեզ խլեց  
Ու բաժանեց ինձանից,  
Ինչո՞ւ,  
Ինչո՞ւ...

Պարանոցդ ծռած,  
Հայացքդ մոլոր ու մուժ՝ ավազներին,  
Ո՞ւմ վտաքի հետքն ես վորոնում...

Ինչո՞ւ,  
Սիրելի՛ս,  
Հայացքիդ մեջը թախիժ կա,  
Անաստղ գիշեր  
Ու բարկություն...

Ոտար վտաների հետքեր կան

Ավազների վրա...

Y Հարադատներիդ արյան շիթեր կան

Ավազների վրա...

Այն մի՞նչ ոտարականն եր աղեղնավոր,

Վեր վտռք դրեց շեկ ավազների վրա...

Ու հարադատներիդ արյան շիթեր կան

Ավազների վրա...

Մեր արեւավառ անապատներում՝

Այսօր հեռավոր ծովերի խոնավություն կա,

Յեւ վտռնոցը հեռավոր ցամաքների...

Մեր անապատներում ոտարականներ կան —

Ծովերի հեռավոր ճամբաներով յեկած...

Ցամաքից ցամաք են անցել նրանք,

Ծովից ծով են անցել

Ու յեկել ,—

Ծովերից,

Ուր ջրշուններն են լողում:

Y Ու մեր անապատների բորենիներին միացած՝

Մարմինդ հոշոտել են ուզում,

Սիրելիս:

Այն սիւ էր,

Վեր ծանր բեռ դրեց կոնակիդ:

Ի՜նչ,

Հիմա համբույրիս փոխարեն

Ոտարներն են քեզ մտրակում,

Սիրելիս:

Պարանոցիդ հպարտությունն սիւ կոտրեց:

Ի՜նչ,

Ոտարներ քեզ զրամսա են կարծում...



Աստ,  
Սիրելիս,  
Իմ քրտինքի,  
Պայքարի,  
Հրճվանքի  
Ու ճամբաների ընկեր,

Յերբ,  
Յերբ վերջապես  
Թաղեսս պիտի ավազների տակ  
Ոտարների բեռները ծանր...

Յերբ,  
Յերբ վերջապես  
Պիտի կայծակի հայացքդ մոռթ...

Յերբ,  
Յերբ վերջապես  
Պիտի սողան բորենիները հայացքիդ տուշ...

Յերբ,  
Յերբ վերջապես  
Տեսնեմ պիտի  
Պարանոցդ արևին պարզած  
Քո հողմածուխի և շողեկանշ անապատների մեջ...

Յերբ,  
Յերբ,  
Յերբ,  
Սիրելիս:

# ԱՐԵՎԵԼՔԻ ՓՈՂՈՑՈՒՄ

1923—ԹԻՖԼԻՍ



Ծերացած,  
Վերացած  
Ու քնկոտ,  
Լայն ջուբբա հագած իմամի նման —  
Կանգնած ե մզկիթը հնամյա  
Փողոցումն Ել Շարքի:

Ինչպես գանկը Հասան-Հուսեյնի  
Հոշոտված,  
Փռնոտված,  
Խուլ ու խարխուլ —  
Կանգնած ե մզկիթը հնամյա  
Փողոցումն Ել Շարքի:

Մինարան նրա  
Ինչպես ծուռ ու ժանգոտ մեխ —  
Խրվել ե  
Յերկնքի կրճքին մով:

Հէյ,  
Արևելքը  
Արևելք ե հիմի...  
Հէյ,  
Արևելքը  
Բարևելք ե հիմի...

Մինեւոյդն ել ատհահա  
Ահա սուղում ե սո՛ւր-սո՛ւր:  
— Մինարա՛ն,  
Զո՛ւր,  
Զո՛ւր,  
Զո՛ւր,

Դո՛ւ-դո՛ւ-դո՛ւ  
 Փա՛ւ ա՛ւ ա՛ւ ա՛ւ ա՛ւ ա՛ւ ա՛ւ  
 Դո՛ւ-դո՛ւ-դո՛ւ  
 Ս՛ւ ս՛ւ ս՛ւ ս՛ւ ս՛ւ ս՛ւ ս՛ւ :

Յե՛վ հանկարծ,  
 Ասես,  
 Տալիս են մինարին մի կից.  
 Մեկից խեղդվում ե ճիշը կոկորդում:  
 Իմամն իր կուրծքն ե ծեծում,  
 Հե՛ծեծում.  
 — Եստաֆրուլլա՛ւ ա՛ւ ա՛ւ ա՛ւ ա՛ւ ա՛ւ ա՛ւ ա՛ւ ա՛ւ ա՛ւ ա՛ւ :

Ահա  
 Զի՛լ,  
 Սուր  
 Սուլում ե սուլիշը ծխնելույզի:

Հի՛մի  
 Ել Շարքի ալամը շարք-շարք  
 Զամի դնացողը չի,  
 Զամում աղոթողը չի...

Հի՛մի  
 Ել Շարքի հազարները շարք-շարք  
 Շարժվում են շտապ  
 Դեպի շոգենամազ,  
 Դեպի շոգեհանդես վես...

Արեւելքի արեւվառ փողոցում  
 Կանգնած դեմ դեմի  
 Դուշման,—  
 Մինարան քալթառ՝  
 Իմամ Իդրիսի նման,  
 Ծխնելույզն աժդահա՝



Մեքենավար Զամիլի նման,—  
 Արևելքի արևավառ փողոցում  
 Կանգնել են դեմ դեմի  
 Դուշման...

Ամեն առավոտ իրիկուն,  
 Յերբ զառանցում ե  
 Անատամ ծերուկը—մինարան,  
 Զահել Զամիլը—ծխնելույզը՝  
 Զիզրու յերզում ե  
 Մոլոր-սոլոր.  
 —Մինարան,  
 Զոլր,  
 Զոլր,  
 Զոլր,  
 Դոլ-դոլ-դոլ  
 Փա՛ա՛ա՛ա՛ա՛ա՛ա՛ա՛ա՛ա՛ա՛ա՛:  
 Դոլ-դոլ-դոլ  
 Սո՛ւ՛ս՛ս՛ս՛ս՛ս՛ս՛ս՛ս՛ս՛ս՛ս՛:



# ԱԶՐԲԵՅԱՆ

1923—ԹԻՖԼԻՍ



## 1

Ջան,  
Աղբբեյջան,  
Ե՛յ,  
Ջան,  
Իդիթ ևս հիմի,  
Ջահել:  
Վառել ևս  
Բյուրամոմ ջահեր.  
Վառել ևս  
Շող,  
Շեմս—արև:  
Ջան,  
Աղբբեյջան,  
Ե՛յ,  
Ջան,  
Սաբահ խեյր,  
Սալամ,  
Բարև:

Պարզել ևս  
Բազուկդ կուռ  
Դեպի  
Քերբելա,  
Մեքքա.

Բանդում ես  
Այլահը ծեր.  
Քանդում ես  
Մինարա,  
Մզկիթ...

Դրել ես  
Մի Հիսուս,  
Այլ—  
Պողպատե  
Սալի վրա,  
Ծեծում ես  
Մուրճովդ ամուր  
Յեւ շինում  
Անիվ,  
Մոտոռ...

Խփիր Իրանի դռան  
Կռանդ հուժկու և կուռ.  
Քանդիր ամրոցները փակ,  
Քանդիր լուսամուտ և դուռ...

✓ Թող Շահի—մահի յերկրում  
Տարածվի բերկրում,  
Ցնծում.  
Թող վոխ ու ցասում ծփա  
Իշչի—Ֆահլայի սրտում...

Ջան,  
Ազրբեյջան,  
Ե՛յ,  
Ջան,  
Ջահակիր,  
Ջահեյ,  
Ջիվան,

Կանգնել ես  
 Արևի դիվան՝  
 Կրճաբալայ,  
 Այ կապած,  
 Պարթև:  
 Նոր Արևելքին—Շարքին  
 Վառում ես  
 Այ վառ հրդեհ:  
 Հեզի ու մեզի հոգում  
 Փռում ես  
 Աստղեր հրթև...

## 2

Ջան,  
 Ազրբեյջան,  
 Ե՛յ,  
 Ջան,  
 Քո ֆաթիմային սալամ,  
 Վոր յերեսին ել քող չունի՝  
 Վոր շարիաթից ել գող չունի:  
 Վոր յեթե ցանկա,  
 Ուզի—  
 Կհուզի սրտեր իզիթ:  
 Վոր հիմա  
 Ձի՛ դնում  
 Հինա  
 Մազերին,  
 Ձեռքին,  
 Խեղքին...

Քո ֆաթիմային—սալամ:  
 Քո Նաջիրային—սալամ:



Քո նմինեյին—սալամ:  
 Սաբահ խեյր,  
 Սալամ,  
 Ու սեր:

Իմ յերգը հարեմ չունի,—  
 Հարեմի դուռն ե քանդում,  
 Ուր հազար սրտեր կանաչ  
 Խամրում են անող բանդում...

Իմ արև կըքում,  
 Գրկում,  
 Իմ կարմիր գրքում,  
 Բաջի,  
 Յեռում ե սերը շեմսի  
 Յեվ կանչ ու պայքար քայի...

## 3

Հեյ,  
 Բաքու,  
 Բաքու,  
 Բաքու,  
 Բա քու հորերը նավթի:  
 Ի՞նչ,  
 Սըր Քոքս կուզի զավթի,  
 Բոքս խաղալ կուզի քեզ հետ...  
 Հապա թող դործի,  
 Փորձի,  
 Վոր զգա ուժը բոքսիդ...

Հեյ,  
 Բաքու,  
 Բաքու,

Բաքո՛ւ,  
Բա քու ֆանտանները զարկող,  
Բա քու հորերը սարքող  
Ռաբոչի-իշի-բանվոր! —  
Այն վոր  
Ոոր հորերդ ե փորում  
Այն վոր  
Նոր որերդ ե բերում,  
Բա ինչպե՞ս չասեմ նրան.  
— Վա՛ր ոլ, եյ, յուզա՛շ Հասան:  
— Բարե՛քեղ, բնկե՛ր Սաքո:  
— Զգա՛րովո, տավա՛րիշշ Իվան:

Զա՛ն,  
Ազրբեյջա՛ն,  
Ե՛յ,  
Զա՛ն,  
Իգիթ ես հիմի,  
Զահե՛լ,  
Վառե՛լ ես  
Բյուրամոմ ջահեր.  
Վառե՛լ ես  
Շող,  
Շեմս—արե:  
Զա՛ն,  
Ազրբեյջա՛ն,  
Ե՛յ,  
Զա՛ն,  
Սաբահ խեյր,  
Սալամ,  
Բարե՛:



# ՊՈԵՄ ԶԻՆԱԿԱՆ

1924--ԹԻՖԼԻՍ



## L O S O U

Տայի Ծինկ,  
Մանդարին Կառ Դիլի աղջիկ,  
Լոտոս ես դու:

Լոտոսը—  
Լուսաբացին ջրից բարձրանում,  
Լվացվում ե:

Կեսորին—  
Լոտոսն արևի դեմ ժպտում,  
Բացվում ե:

Լոտոսը—  
Իրիկվան թափնվում ե ջրում,  
Գոցվում ե:

Լուսաբացին—  
Լոտոսի պես բացվեցիր դու:

Իրիկվան—  
Լոտոսի պես կը գոցվես լուռ:

Իսկ ձևը ե արեշող կեսորդ,  
Տայի Ծինկ:



Կինեմոնի և թևուկի անուշաբույր յուղերով  
Ոժովում ես:

Զոհար:

Զե՛ վոր լոտոսի պես

Իրիկվան գոցվում ես:

Անուշաբույր յուղերը քեզ արև տվող չեն.

Նուրբ նազանքներդ յերկար տևող չեն:

Զե՛ վոր կեսոր չունես դու,

Տայի՛ Ծինկ,

Զին մանդարին Կառ Դիլի աղջիկ:

Կեսորվա արևը վառ կրակ է,--

Գրանիտ հոգիները հուզում է:

Բանվոր մարդն ուզում է

Գրկի արևծին կրքի աղջկան...

Իսկ դո՛ւ

Վախե՛լ ես,

Արևից փախե՛լ ես,

Ե՛, Ե՛, Ե՛,

Զինմաչինի չինի չին աղջիկ:

Հայրդ

Հարուստ մանդարինն է Պեկինի.

Ունի թե գինի,

Թե շարքաթ

Ու խորտիկ:

Զնգուն ստերլինգները—շատ:

Զնգուն վոսկիները գիգել է

Հազար հեզ զոհերի զրկանքիցը.

Նրանց կյանքը կիգել է:

Իսկ քեզ

Բյուրեղյա քյոշկումն է պահում,

Տայի՛ Ծինկ,

Մանդարինի արևագունի աղջիկ:

Քյոշկում  
 Որերով որորվում ես որորով:  
 Մեղկ փոված  
 Յերագում ես,  
 Նուրբ ու մեղմ նազում ես:  
 Պերսին ծաղկի հոտն ես քաշում  
 Ու մաշում ես որորուն որերդ,  
 Տայի Ծինկ,  
 Մանդարին Կառ Դիի մաշվող աղջիկ:

Վոսկիներն արևի տապը չունեն:  
 Վոսկիները մաշում են մարդուն:  
 Իսկ արևի շողերը մարդուն թրծում,  
 Խաշում են:  
 Մաշում են,  
 Մաշում են,  
 Մաշում են  
 Բյուրեղյա քյոշկերը մարդուն...

Ե՛, Է, Է,  
 Ձինմաչինի չինի չին աղջիկ,  
 Արևի դեմ մարմինդ վառե՞լ ես:  
 Բրնձի ձիգ արտերը վարե՞լ ես:  
 Պայքարում խոր վերքեր առե՞լ ես:  
 Հառե՞լ ես հայացքդ վաղվան վառ...

Ձե՛,

Ե՛,  
 Ձինմաչինի չինի չին աղջիկ,  
 Դու մի լոտոս եյիր լուսաբացին:

Իրիկվան—  
 Լոտոսի պես կը գոցվես լուռ:

Իսկ կեսորդ  
 Ձի լինի,  
 Ձի լինի,  
 Ձի լինի,  
 Ձե,  
 Ե՛,  
 Ձինմաչինի չինի չին աղջիկ:

## ԿԵՍՈՐՎԱ ԱՐԵՎԸ

Գիշեր:  
 Պեկինը գիշերում  
 Ոպիումի որորանք ե:  
 Պեկինը գիշերում  
 Դեղին ուլունքով որորան ե:  
 Պեկինը գիշերում  
 Որորում ե քեֆ քաշող քյոշկերը:  
 Որորում ե հոգնած կուլիի քունը:

Գիշեր:  
 Խավարը խառնել ե Պեկինի քարտեզը:  
 Տայի-Ծինկի պարտեզը  
 Խաղաղ ե,  
 Անձայն:

Յերկու սովերներ անցան,  
 Ծաղկած ծառի տակ կանգ առին:

Ու խոսում են նրանք բարձր:

—Ծի՛ռ Կա,  
 Ձինմաչինի չին չարքաշ աղջիկ,

Ծովի հորձանքների նման  
Հուզվել ես դու...

— Յգահ Յի,  
Զինմաշինի չին հուզուն մանչ,  
Հորձանուտ ծովերի խորքումը  
Սուզվել ես դու...

Մանչն ասաց.  
— Ծիսւ կա,  
Հրակ ես,  
Ճաճանչող ճրակ ես,  
Կրակ ես,  
Արևի տակ դու:

Աղջիկն ասաց.  
— Յգահ Յի,  
Քաղցր ես,  
Խրոխտ ու բարձր ես,  
Կարճր ես  
Զուգունի չափ դու:

Լուսամուտիցը քյոշկի  
Տայի Ծինկը լսում ե լարված.  
Ասես, պինդ հարված տվին  
Նրա սրտին վառված:  
Խմնդն եր իր սիրտը խայթող,  
Ե՛:

Տայի Ծինկ,  
Հարուստ մանդարինի աղջիկ,  
Պարտիզումը  
Արեւմառ յերկու սրտեր կան,  
Մեկը՝ Յգահ Յին ե,  
Վարձու մակույկավարդդ:

Մեկը՝ Ծիու կան ե,  
 Պարտիզպանիդ աղջիկը:  
 Տայի Ծինկ,  
 Պարտիզումդ  
 Արևավառ յերկու սրտեր կան:  
 Իսկ վորքան ցրտեր կան  
 Քո սրտումը...

Նրանք  
 Եսոր  
 (Կեսորվա արևներ են արևի դեմ:  
 Կեսորվա արև են  
 Զարթնող աշխարհի համար:

Ու նրանք  
 Հազար են ու ելի, ելի,—  
 Վոր կառուցել են քյոշկերը ձեր...  
 Ու թե վրեժը նրանց կանչի—յելի՛ր,  
 Կր քանդեն ձեր աշխարհը ծեր...

Իսկ դու կեսոր չունես, չունես:  
 Յերեկ ու եսոր չունես, չունես:  
 Իրիկունդ շուտով կգա, կգա,  
 Մանդարին Կառ Դիի հյուժված աղջիկ:

## Թ Ի Ա Վ Ա Ր Ը

Լուսաբաց:  
 Պեկինը արևի բաղնիքումն ե:  
 Քյոշկերը վառվում են վոսկեշողով:  
 Զիգ ու ծուռ փողոցներումը  
 Աղմկում են կուլինները:



Տայի Ծինկը մակույկումն է:  
 Մակույկը—լճի վրա:  
 Վարձու մակույկավար Յզա Յին  
 Թիավարում է:  
 Վարձու յե տվել  
 Իր բազուկը զույգ,  
 Վոր որվա մեջ  
 Կես անդամ խաշած բրինձ ծամի:

Ե՛,  
 Յզա Յի,  
 Հանդուգն թիավար,  
 Ծփուն ծովերումն ել կողաս դու:  
 Բազուկներդ կուռ են ու թափով:

Թե հորձանուտ ծովերում թիավարես դու,  
 Տայի Ծինկը մակույկումդ նստողը չի՛,—  
 Նա հարուստ մանդարինի փերուն աղջիկն է.  
 Հորձանքիցը սոսկսւմ է նա.  
 Մարում է նա փորձանքիցը...

Կրճքիդ տակ տայֆունն է դղրդում,  
 Յասկոտ ծովերի կարոտն է հուզում քեզ...

Ե՛,  
 Յզա Յի,  
 Հանդուգն թիավար,  
 Լճակը մի փոքր բաժակ է,  
 Անա նրա հատակը:  
 Կատակ են մակույկն ու լիճը:  
 Ափից ափը մի թռիչք է, կատակ է:

Իսկ կրճքիդ տակը տաֆյունն է դղրդում,—  
 Արեւելքի ցասումը,



Զինմաչինի

Չարքաշ չինների ազատության շառաշը...

Ե՛,

Ցզան Յի,

Հիշում ես,

Նավաստի եյիր նավում շողեւար:

Թռիչքդ ովկյանից ովկյանն եր.

Թեւերդ՝ աշխարհից աշխարհ,

Որերիդ դարունը նրանցն եր,

Վորոնք քամում եյին

Զինմաչինի արյունը հորդ...

Ե՛,

Ցզան Յի,

Հիշում ես,

Մի որ ել ծովափ նետեցին քեզ:

Հեզ ու համր մարդ եր պետք նրանց:

Իսկ կրծքիդ տակը տայֆունն եր դղրդում...

Ու հիմի՛

Վարձու յես տվել բազուկներդ զույգ,

Վոր որվա մեջ

Կես անգամ խաշած բրինձ ծամես...

Ահա Տայի Ծինկը մակույկում նստած

Նայում է աչքովն իր բորբ:

Վարձու Ցզա Յին թիավարում է:

Իսկ Տայի Ծինկը կրքից հեռւմ ու մարում է:

Հուզում է նրան վարձու ստրուկը.

Աղջիկն ուզում է

Ձուլվի նրան,

Սիրի,

Տիրի...

Քսանհինգ տարու արու յե իր սարուկը,  
Իսկ ինքը—հասուն եգ,  
Սեգ ու սիրուն տիրուհին նրա:

Վեր թռավ չար՝  
Զինամաչինի չինի չին ճկուն աղջիկը.

—Ե՞,  
Յզս Յի,  
Իմ վարձու սարսւղ դու,  
Այժմ ինձ վարձիր դու,  
Իմ տերը դարձիր դու:  
Գրկիր ինձ,  
Պրկիր ինձ գրկումդ,  
Կրքումդ հալվեմ թող:  
Ե՞:

Տսմ, Յզս Յի,  
Ինչ վոր ուզես,—  
Բյուրեղյա քյոշկս—քեզ.  
Մարջաններս ու փերուղներս—քեզ.  
Յես ել լինեմ քեզ,  
Լինեմ հեզ հարճի պես,  
Ե՞:

—Տիրուհի,  
Թեերս թող,  
Թող,  
Վոր թխավարեմ յես:

—Ե՞,  
Յզս Յի,  
Արևի արու մանչ,  
Ի՞նչ,  
Զինամաչինի չինի չին չքնաղ աղջիկը չեմ:

Գրկիր ինձ,  
 Գրկիր ինձ,  
 Ասա ինձ կեսն այն խոսքերի,  
 Վոր ասում եյիր  
 Պարտիզականիս աղջկան բորիկ:

—Տիրուհի,  
 Թևերս թո՛ղ,  
 Թո՛ղ,  
 Վոր թիավարեմ յես:

—Ե՛ր,  
 Յգն ջի,  
 Ճրտիցը դողում եմ յես.  
 Մողում եմ ծնկերիդ մոտն ահա:  
 Գրկիր ինձ ջերմ գրկումդ.  
 Սրտումդ սեր չկա՞ վոր,  
 Ե՛ր:

—Տիրուհի,  
 Թևերս թո՛ղ,  
 Թո՛ղ,  
 Վոր թիավարեմ յես:

Պեկինում ջահել մանդարիններ չկան՝ վոր—  
 Ազնվացեղ,  
 Հարուստ,  
 Կըքոտ:  
 Նրանց քամե՞լ ես վոնց վոր կիտրոն.  
 Նրանց սերը սմոն ե հիմի:

Իսկ յես  
 Վարձու յեմ տվել բազուկներս միայն,  
 Վոր որվա մեջ  
 Կես անգամ խաշած բրինձ ծամեմ:

Տիրունի,  
Թեևրս թո՛ղ,  
Թո՛ղ,  
Վոր թխավարեմ յես:

— Յզն Յի,  
Թիյերդ կրծքիս վրա վաբիր.  
Մեջքիս շուրջը լարիր բազուկներդ:  
Լճակդ լինեմ յես,  
Ե՞

— Տիրունի,  
Թեևրս թո՛ղ,  
Թո՛ղ,  
Վոր թխավարեմ յես:

Յես որվա մեջը կես ժամ եմ սիրում նրան:  
Նա որվա մեջը կես ժամ ե սիրում էնձ:  
Լուսաբացից մինչ արևմուտը  
Մեր բազուկները վարձուլ յեն...

Լուսաբացից մինչ արևմուտը  
Մեր սրտերն աշխարհի գալիքներին են.  
Մարդկային փոթորկվող ալիքներին են.  
Հողմերին ու աշխարհի չորս կողմերին են.  
Մեր սրտերը ազատատենչ բյուր սրտերին են...

Տիրունի,  
Թեևրս թո՛ղ,  
Թո՛ղ,  
Վոր թխավարեմ յես:

Դու քնքուշ,  
Ուժատ  
Ու շատ նուրբ ես:

Իսկ իմ հույզերը քանդող են:  
 Անթրոպ են քեզ իմ խուռն խոսքերը  
 Ու ձեռներս—կոպիտ:  
 Մարջաններդ—քեզ.  
 Փերուզներդ—քեզ.  
 Նրանք հատիկ-հատիկ արցունքից են,  
 Կաթիլ-կաթիլ արյուն են նրանք...

Իմ սերը մարջանին չի.  
 Իմ սիրտը վոսկուն չի.  
 Բյուրեղյա քյոշկին չի:  
 Յես ծովի ու սովի սովոր մարդ եմ,  
 Ինչիս մեռնող ու մաշված սերդ:  
 Ե՛:

Տիրուհի,  
 Թևերս թող,  
 Թող,  
 Վոր թիավարեմ յես:

## Լ Ո Տ Ո Ս

Ուղիումը գերում ե մարմինդ:  
 Ուղիումը թմբիր ե բերում:  
 Որորում ե,  
 Որորում ե,  
 Որորում ե:  
 Ծխիր,  
 Ծխիր,  
 Ծխիր:

Տայի Ծինկը ծխում ե:  
 Ծխում ու հազում ե:

Մահճի փափուկ բարձեքը գրկած՝  
 Կրքից դողում ե,  
 Սողում ե պորտի վրա:  
 Քունը չի գա,  
 Քունը չի գա,  
 Ձե,  
 Քրանքումը լողում ե:  
 Ե՞:

Գիշերվա մթնումը՝  
 Մի եզ շուն  
 Նրա սրտումը վռնում ե տրտում:

Գիշերվա մթնումը՝  
 Մի եզ շուն  
 Փողոցում վռնում ե տրտում,  
 Մի հեզ շուն դռան մոտը քյոշկի...

Ե՞,  
 Տայի՛ Ծինկ,  
 Հողումդ ձմեռ ու ձյուն կա հիմի:  
 Մահվան թույլ հծծյուն կա հիմի:  
 Շան նման մեկը ներսդ վռնում ե.  
 —Ա՛, ո՛ւ ո՛ւ ո՛ւ ո՛ւ:  
 Ե՞:

Լսեցի՞ր:

Հիմի կյանքը թվում ե քեզ  
 Ձար ու չնչին.  
 Ձինմաչինի չինի չին աղջիկ.  
 Հարուստ մանդարինների համբույրը  
 Թվում ե չնչին,  
 Ձե՞:



Սպասես ել ինչին,  
Տայի Ծինկ,  
Բյուրեղյա քյոշկի թմրող աղջիկ:

Տայի Ծինկ,  
Մանդարին Կառ Դիլի աղջիկ,  
Մաղձոտ ու թախճոտ ես հիմի:

Ուպի՞սւմ ծխիր:  
Քո՞ւն մտիր:  
Թմրի՞ր դու:

Լուսաբացին—  
Լոտոսի պես բացվեցիր դու:

Լոտոսի պես զոցվ՞ում ես—  
Իրիկունդ ե:

Իսկ արեշող կեսորդ  
Չեկանվ,  
Չեկանվ:

Տայի՛ր Ծինկ,  
Մանդարին Կառ Դիլի անարե ու պոռնիկ աղջիկ...



ՌԱՄ ՌՈՅԸ

1925—ԻՐԱՆԻ, Ա.



## 1

Շանհայի փողոցում:  
Ամառ:  
Կեսոր:

Գործադուլ:  
Ցույց ե:  
Ցնցում:

Հնձում ե գնդացիին եսոր  
Բանվորին,  
Գյուղացուն ըմբոստ...

Զարթնել ե կուլին չարքա՜  
Դնիցը գերող ու խոր:  
Զինմաչինը հուր ե հիմի.  
Որեբը—պայքար, ժխոր...

Զինը  
Զնչին չի հիմի  
Փշրվող ու նուրբ չինի չի:  
Զինը  
Հինը չի հիմի,  
Դնաբեր ու մեղկ գինի չի...

Շանհայի փողոցումն եսոր  
 Յեռում ե կյանքը բոցված:  
 Մռնչում ե առյուծը հզոր,  
 Սիրտը խոր ու խոր խոցված...

Շարժվում են շարքերը փողոցով:  
 Ծով ե փողոցը յերթով:  
 Փռվել են դրոշներն ալ հուր:  
 Փողոցը թնդում ե յերգով...

— Յելեք,  
 Ում կյանքը տանջանքով լի յե,  
 Ով վոր կուլի յե—բանվոր,  
 Մեքենավար,  
 Նավաստի,  
 Դարբին,  
 Հնձող,  
 Առանջ,  
 Առանջ,  
 Առանջ:

## 2

Բանկերը Լոնդոնի, Տոկիոյի՝  
 Եսոր գնդակով են խոսում:  
 Շանհայի փողոցումն եսոր  
 Զինների արյունն ե հոսում...

Կանգնած հնդիկ զինվորներ հիսումեկ՝  
 Դեմ առ դեմ շարքերի անանց,  
 Գնդակի յեն բռնում անխնա  
 Ծերերին,  
 Փոքրերին,  
 Կանանց...

Մի ջահել սպա սպիտակ,  
 Յեկած լոնդոնից հեռավոր,—  
 Հրաման ե տալիս կտրուկ.  
 — Կրակ, անդադար կրակ:

## 3

Մեկը հիսունմեկ զինվորից—  
 Ռամ Ռոյը՝ հնդիկ զինվոր,  
 Հրացանը ձեռքին բռնած,  
 Կանգնել ե մտածկոտ ու լուռ:

Յեվ հենց այդ դաժան ժամին,  
 Թռչում ե Շանհայից հեռու  
 Խոհուն միտքը Ռամ Ռոյի,  
 Ռամ Ռոյի հոգին յեռուն:—

Հե հեյ,  
 Հեռավոր Հինդում,  
 Բիխուրի գավառում փոքրիկ՝  
 Հայրենի դյուղն ե յերևում,—  
 Գյուղը աշխատող ու սոված:  
 Յեվ ահա  
 Գյուղի վերևում,  
 Գանգեսի ափին կաած՝  
 Յեղեգնյա խրճիթը Ռամ Ռոյի,—  
 Տկուր ֆաքիրի նման  
 Իր բաղդին  
 Կամ մահվան սպասող....

Ռամ Ռոյը տեսնում ե կարծես,  
 Կարծես տեսնում ե,—  
 Ահա  
 Չոր խորի վրա պառկած



Ի՞ր կինը  
 Հյուժված ու հիվանդ:  
 Յերկու մանչուկներ մատղաշ  
 Նստել են հեվքոտ մոր կողքին.  
 Յեվ ինչպե՞ս ուզեն,  
 Ինչպե՞ս,  
 Մայրիկից մի պատառ չոր հաց:

Ամեն առավոտ-իրիկուն՝  
 Կարոտով,  
 Կակիժով մանկական  
 Հիշում են իրանց հորը—Ռամ Ռոյին,  
 Հիշում են,  
 Կարոտում  
 Ու լալիս:  
 Ու հարց են տալիս անվերջ  
 Մահամերձ և անճար մայրիկին.  
 — Մայր,  
 Ո՛ւր ե,  
 Ո՛ւր ե հայրը մեր,  
 Ինչի՞,  
 Ել ինչի՞ չի գալիս...

Ե՛ր,  
 Ռամ Ռոյը ինչպե՞ս չհիշի,—  
 Թե քանի միստեր ու սիր  
 Հինդը շինել են մի խսիր,  
 Ու նստած քեֆ են քաշում...  
 Յեսիր են Հինդը հիմի,  
 Շղթայված,  
 Իր կյանքն է մաշում...

Ե՛ր,  
 Ռամ Ռոյը ինչպե՞ս չհիշի,—  
 Թե քանի քանի անգամ

Դրել են զնդացիւր մահաբեր  
 Չարքաշ հին չինդի սրտին...  
 Յեւ Քանի՛ բանվոր դյուղացի  
 Լ՛սկել են զնդակիցը խոցող...  
 Ու դեռ քանի՛սը կընկնեն՝  
 Սրտերը վրեժի բոցով...

Ռամ Ռոյ,  
 Հէյ,  
 Հնդի՛կ զինվոր,  
 Տերդ անաշխատ,  
 Դաժան՝  
 Յերկրումդ քեզ գերեց.  
 Քեզ Շանհայ բերեց,  
 Ինչի՛,—  
 Յերբ Չինի կանչը հնչի,  
 Յերբ Թնդա սիրտը Չինի,  
 Չինի՛ քեզ,  
 Դահիճ շինի  
 Ու հրաման.  
 — Առաջ,  
 Կրակ...

Ռամ Ռոյ,  
 Հէյ,  
 Հնդի՛կ զինվոր,  
 Ի՛նչ,  
 Կրակե՞ս դու պիտի,  
 Կրակես չարքաշ չինների սրտին...



Թռչում են զնդակները կարկուտ  
 Դեպի շարքերը չինների՝

Զինմաչինը յերբեք չի՝ ների  
Սպանդն այդ դաժան և անգութ...

Զինմաչինը յերբեք չի՝ ների  
Դահճին դավադիր ու դաժան,  
Վոր ըմբոստ, չարքաշ չինների  
Արյունը թափեց փողոցում...

Գնդակները նորից են թռչում  
Ուղիղ:  
Անվրեպ:  
Համազարկ:  
Շարքերը անգն,  
Բայց պողպատ,  
Վհատում չկա,  
Զի՛ լինի:

Ահա ուսանող մի ջահել՝  
Փռվել է փռչումը, գետին.  
Քերում է հողը արնաներկ  
Ու հեվում շնչովը հետին:

Ընկավ մի կռվի վերք առած,  
Գլխիցը արյուն է հոսում.  
Հայացքը հեռուները հառած,  
Ինչ վոր զառանցում է, խոսում:

Մի տաս տարեկան չին տղա,  
Կիսամերկ, բորիկ, նուշ աչքով,  
Մեղմած բռունցքները փոքրիկ,  
Կանգնել է բանվոր հոր կողքին:  
Յեվ հանկարծ գնդակ մի բոցված՝  
Ծակեց խոր կուրծքը չին տղի.  
Ընկավ նա կրծքիցը խոցված,

Ճշարով նվաղ.

— Ա՛խ, հայրի՛րի՛կ:

Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի:  
Ու թվաց նրան, վոր իրավ,  
Իր մանկիկն եր նա հարազատ—  
Ընկավ վիրավոր ու մեռավ:

Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի:  
Հիշեց հայրենիքն իր Հինդ,—  
Պինդ շղթաներով շղթայված:

Հիշեց մանկիկներն իր անտեր,  
Վոր դուցե մեռել են քաղցից...

Յեվ կամ հենց գուցե այդ ժամին՝  
Նրանք ել ընկան արնաքամ...

Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի:  
Աչքիցը կայծեր ե հորդում:  
Կարծես այն փոքրիկ չին տղան  
Այնպե՛ս նման եր իր վորդուն...

Յեվ ահա սրտումը Ռամ Ռոյի  
Ճշում ե սուր ձայն մի ծանոթ.  
Կարծես իր մանկան ճիչն ե այն.  
—Ա՛խ, հայրի՛րի՛կ, ամոթ՛ քեզ, ամոթ՛...

Ռամ Ռոյը ցավիցը ցնցվեց:  
Ինչ վոր մի բիրտ ձեռք առնական  
Պոկում ե իր սիրտը տեղից:  
Յեվ հանկարծ թափով վճռական  
Կանգնեց շարքերի դեմը սեդ.  
Ու կանչեց բարձր, բարձրականչ.

—Հէյ,  
 Հնդիկ զինվորներ,  
 Ի՞նչ լսեք,  
 Լսեք,  
 Յեղբայրներ իմ անգետ,  
 Կանգ առեք,  
 Ել մի կրակեք  
 Ձեր յեղբայրների վրա,  
 Ձեր վորդիների, քույրերի,  
 Ու ձեր հայրերի վրա...  
 Ահա կանգնել եմ յես անվախ,  
 Կրծքաբաց կանգնել եմ ձեր առաջ.  
 Յե՛վ յես կմեռնեմ անհառաչ,—  
 Թե վոր գնդակները ձեր թեժ  
 Խրվեն կրծքումս կարծրակուռ...  
 Ձե՛,  
 Կրակողը չեմ յես յերբեք  
 Չարքաշ չինների սրտին...  
 Վրեժիցը մեր մահաբեր  
 Դողա թող սպան մեր դաժան...  
 Թող մեր գնդակներն անվրեպ  
 Սուլեն,  
 Յե՛վ թռչեն  
 Ու խոցեն  
 Կրծքերը մեր բիրտ տերերի...  
 Ձե՛,  
 Կրակողը չեմ յես յերբեք  
 Չարքաշ չինների վրա...

Շփոթ ե տիրել շարքերին:  
 Հիսուն զինվորները հնդիկ՝  
 Կանգնել են անշարժ ու մռայլ:

Հնչեց հրամանը սպայի.  
 —Գնդակել, պատրաստ, կրակ:



Հիսուն զինվորները հնդիկ՝  
Կանգնել են անշարժ ու մռայլ:

Հրամանը նորից ու նորից.  
— Լսում եք, պատրաստ, կրակ:

Հիսուն զինվորները հնդիկ՝  
Կանգնել են անշարժ ու մռայլ:

Դողում ե ձայնը սպայի.

— Հեյ,

Դուք,

Ջինվորներ հնդկացի,

Հիշեցեք,

Հինդուս հեռավոր

Ձեռքումս պատանդ եք թողել

Ձեր հայրերը ծեր ու վորդիք...

Լսում եք,

Կրկնում եմ,

Կրակ:

Պարզվեցին հրացանները հիսուն

Դեպի կուռ կուրծքը Ռամ Ռոյի:

Հրամանը համառ վորոտաց:

Ու հրացաններիցը հիսուն

Սուլեց զիւ

Միայն

Հինգ

Գնդակ:

Որորվեց Ռամ Ռոյը գունատ:

Մահամերձ փովեց չոր գետնին:

Դեմքին դողում ե դառն ժպիտ:

Ձեռքը պինդ սեղմած խոր վերքին,



Սողոմ եւ առաջ ու առաջ՝  
 Դեպի շարքերը չի՛ննների,  
 Սողոմ ե,  
 Հեռւ  
 Ու նորից,  
 Դողոմ ե,  
 Հեռւ  
 Ու նորից:

Շարքերի մօտը չի՛ննների,  
 Փողոցի մեջտեղը ահա  
 Պառկել ե փոքրիկ չի՛ն տղան,—  
 Վոնց վոր մի ծաղիկ տրորված,  
 Յեվ կյանքը սառել ե դեմքին:

Յեվ ահա Ռամ Ռոյը հնդիկ  
 Գրկեց արնաքամ չի՛ն տղին,  
 Խնչպես իր վորդուն հարազատ.  
 Կարծես շնչում ե կամաց.  
 — Յես ու դու ընկանք այս կովում,  
 Վոր Ձինը լինի միշտ ազատ...

Ավելի հզոր ե հիմի  
 Թափը թնդացող շարքերի...  
 Բյուր սրտեր ձուլված են ի մի...  
 Լսում եք ձայնը զարկերի...  
 Ավելի խրոխտ ե հնչում  
 Հիմի կանչը գոռ չի՛նների.  
 — Ձինմաչինը յերբեք չի՛ ների  
 Դահճին դավադիր ու դաժան,  
 Վոր քանի՛ չարքաշ չի՛նների  
 Արյունը թափեց փողոցում...

Ավելի խրոխտ ե հնչում  
 Հիմի ռազմերգը չի՛նների.

—Յեկեք,  
Ում կյանքը տանջանքով լի՛ յե,  
Ով վոր կուլի՛ յե — բանվոր,  
Մեքենավար,  
Նավաստի՛  
Դարբին՛ն,  
Հնձող  
Առանջ,  
Առանջ,  
Առանջ...

Խնչպես հայր վորդի հարազատ, —  
Ռամ Ռոյը՝ զինվորը հնդիկ,  
Ու տաս տարեկան չին տղան՝  
Գրկել են իրար անբաժան:





# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| Անգ                   | Յերես |
|-----------------------|-------|
| 1. ՆԱԽԵՐԴ             | 9     |
| 2. ԻՄ ՅԵՐԴԸ           | 15    |
| 3. ՍՏԱՄԲՈՒԼ           | 27    |
| 4. ԲՈՄԳԵՅ             | 29    |
| 5. ՀԱՐԵՄԻՅ ԴՈՒՐՍ      | 32    |
| 6. ԼԱՍՏԱՆԱՎՈՐԴՆԵՐ     | 35    |
| 7. ԾՈՂԸ               | 41    |
| 8. ԴՐԱԽՏ              | 47    |
| 9. ԴԵՐՎԻՇԸ            | 55    |
| 10. ՅԵՐԿՈՒ ՍԵՐ        | 61    |
| 11. ՈՒՂՏ              | 69    |
| 12. ԱՐԵՎԵԼՔԻ ՓՈՂՈՅՈՒՄ | 75    |
| 13. ԱԶՐԲԵՅՋԱՆ         | 81    |
| 14. ԳՈՆՄ ՉԻՆԱԿԱՆ      | 89    |
| 15. ԲԱՄ ԲՈՅ           | 105   |





ՀԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0026165



ԳԻՐԸ 1 ԽՈՒՐԸԻ

ЦЕНА

11  
3954

514  
5

ԱԶԱՏ ՎՄՏՈՒՆԻ  
**„ВОСТОК В ОГНЕ“**

(Стихи на армянском языке).

ИЗДАНИЕ

Северо-Кавказск. Краевого Национального  
Издательства— Крайнациздат.

г. Ростов н-Д., ул. Энгельса 57.